ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF INTERNATIONAL RELATIONS

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 ● Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 ● 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 256 «__05____»___06_____2025 թ.

Արձանագրություն N 256

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2025թ-ի հունիսի 5-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 36 (երեսունվեց) անդամներից 28-ը:

1. Ամբիոնի վարիչի պաշտոնի համար դիմումի քննարկում և մրցույթի անցկացում /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
2. Թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատում / զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
3. ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի դասախոս, ք.գ.թ. Գոռ Պետրոսյանի հեղինակած **«Պատժամիջոցները ժամանակակից միջազգային հարաբերություններում»** վերտառությամբ ուսումնական ձեռնարկի հրատարակության երաշխավորելու հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
4. Թեկնածուական ատենախոսության թեմայի վերանվանման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան /:
5. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
6. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել ամբիոնի վարիչի պաշտոնի համար պ.գ.թ., դոցենտ Վահագն Ագլյանի անունը:
   բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը, ըստ որի խորհրդի 36 անդամներից քվեարկությանը մասնակցել են 28-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

1. Ամբիոնի վարիչ պաշտոնի համար՝

   Վահագն Ազլյան – 24 կողմ, 3 դեմ, 1 անվավեր քվեաթերթիկ:

2. ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի դասախոս, բ. գ. թ. Գոռ Պետրոսյանի հեղինակած **«Պատժամիջոցները ժամանակակից միջազգային հարաբերություններում»** վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:
3. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման.

   ա/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հայցորդ **Տաթիկ Գասպարյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Եվրոպական Միության քաղաքականության ազդեցությունը Արևելյան գործընկերության երկրների արտաքին քաղաքականության վրա 2020-2025թթ.»**, **ԻԳ.00.04 – «Միջազգային հարաբերություններ»** մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել պ.գ.թ., դոցենտ Ժ. Մանուկյանին:

4. Հաստատել առկա ուսուցմամբ ասպիրանտի թեկնածուական ատենախոսության թեմայի վերանվանումը.

ա/ ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի նախկին ասպիրանտ **Վիկտորիա Վարդգեսի Մելքոնյանի** թեկնածուական ատենախոսության թեման վերանվանել **«Սոցիալական մեդիայի դերը ՀՀ-ում քաղաքական հաղորդակցությունների փոխակերպման պայմաններում» ԻԳ.00.01 – «Քաղաքական գիտության տեսություն»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար::

5. Առկա ուսուցմամբ ասպիրանտներին ատեստավորել և երաշխավորել ուսուցման հաջորդ տարի տեղափոխվելու համար:

Գիտական խորհրդի նախագահ *Տ. Եփրեմյան*

Գիտական խորհրդի քարտուղար *Գ. Բալասանյան*